

ՀՐԱՏՈՐԵԿԱՌԹՅՈՒՆ ՀԱՄԱ՝ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

354.5

Հ-11

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՆՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ.

Գիրք № 18

ՀԱՄԱ՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(1927 թ. ՅԵՎ 1928 թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ)

(Մատչելի տեսակից)

ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄՍՍՈՒՆԵՐ

354.5

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ.

2-11

u

Գիրք № 18.

ՀՍԽՀ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄՍՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(1927 թ. ՅԵՎ 1928 թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ)

(Մատչելի տեսութիւն)



14879-57

ՅԵՐԵՎԱՆ

1929 թ.

09 SEP 2013

40.321

1 MAR 2010

 ՊԱՏ. № 1242 ԳՐԱՌԵՊԳԼԻՎԱՐ 954 (Բ)

ՏԻՐԱԺ—2500

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ 1-ԻՆ ՏՊԱՐԱՆ

Յերկրում հեղափոխական որինականությունն ամբողջական հարցը Արդժողկոմատի գործունեությունը հիմնական խնդիրն է յեղել: Հեղափոխական որինականությունը—այդ խորհրդային իշխանությունն սահմանած որենքների անշեղ կիրարկությունն է անխափր բոլորի կողմից: Այդ աշխատանքը ընդհանրապես խորհրդային և կուսակցական բոլոր մարմինների համար մեծ կարևորություն ունի, սակայն այս ասպարեղում ամենադժվար դերերից մեկը, բնականաբար, պետք է կատարեր Արդժողկոմատը, վորպես մի մարմին, վորի վրա յե դրված հանցագործության դեմ պայքարելու և պետական մյուս մարմինների որինաչափ գործունեության վրա հսկելու պարտականությունը:

Հեղափոխական որինականություն կիրարկելու կարևոր և դժվարին աշխատանքները պահանջում եյին Արդժողկոմատից դատական ասպարատը հարմարեցնել այդ աշխատանքներին իր վրա դրված պատասխանատու գործը հաջողությամբ կատարելու համար:

Այդ նպատակով ել Արդժողկոմատը վերակազմություն յենթարկեց թե կենտրոնական և թե դատական ասպարատը:

ԱՐԴժՈՂԿՈՄԱՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արդժողկոմատի կենտրոնական ասպարատը մինչև 1927 թ. բաղկացած եր ընդհանուր ղեկանատնից և

չորս բաժիններից—Ֆինանսական—վարչական, Դատական—կադմակերպչական, Որենսդրական—իրավաբանական և դատախազական: 1927 թ. և 1928 թ. ընթացքում այդ ապարատը վերակազմության յենթարկվեց հետևյալ կերպով.—Ֆինանսական—վարչական բաժինը վերացվեց, և նրա ֆունկցիաները դրվեցին գործերի կառավարչություն վրա: Դատական—կադմակերպչական բաժինը վերացվեց, և նրա ֆունկցիաները այժմ կատարում են Գերագույն Դատարանը:

Դատախազական բաժինը, վոր մինչ այդ անմիջաբար յենթարկվում էր Հանրապետության Դատախազին, վերացվեց և ձուլվեց Գերագույն Դատարանի Դատախազության հետ: Դատախազական ապարատի այս վերակառուցման շնորհիվ վերացավ դավառական դատախազական մարմինների կրկնակի ղեկավարությունը, քանի վոր մինչև այդ դատախազական մարմիններին ղեկավարում էին, մի կողմից Արդիոլիոմատի դատախազական բաժինը, և մյուս կողմից՝ Գերագույն Դատարանի դատախազությունը:

Այդ փոփոխություններից հետո Արդիոլիոմատը այժմ ունի միայն գործերի կառավարչություն (ընդհանուր գրասենյակ) և Որենսդրական—իրավաբանական բաժին:

Շլյական վերակազմության յենթարկվեց նաև դատական ապարատը: Հանրապետության Գլխավոր Դատարանը վերացվեց, և նրա ֆունկցիաները, այն է՝ քրեական և քաղաքացիական գործերի քննությունը մասամբ անցան ժողովրդական դատարաններին, մասամբ՝ Գերագույն Դատարանի Դատական Կոլլեգիային: Միաժամանակ ժողովրդական դատարանների իրավասությունը քաղաքացիական գործերի նկատմամբ ավելաց-

վեց մինչև 2000 ռուբլի: Ժողդատարանների քաղաքացիական գործերի վերաբերյալ վորոշումների դեմ դանդառ տալու ժամանակամիջոցը կրճատվեց մինչև 1 շաբաթ, իսկ Գերագույն Դատարանի Դատական Կոլլեգիայի վորոշումների դեմ դանդառ տալու ժամանակամիջոցը—մինչև յերկու շաբաթ: Այնուհետև, դյուղական վայրերում ծագող քաղաքացիական ու քրեական գործերի քննությունն ու լուծումն արագացնելու և ժողդատարանները անկարևոր քաղաքացիական ու քրեական գործերից թեթևացնելու նպատակով հիմնովեցին դյուղխորհուրդներին դատական սեկցիաներ, վորոնց քննություն յենթակա յեն մինչև 15 ռ. գնահատված քաղաքացիական հայցերը, ինչպես նաև ծեծի և խուճով, գրավոր կամ գործողությունամբ վիրավորանք հասցնելու վերաբերյալ քրեական գործերը:

Կարևոր փոփոխություն յենթարկվեց նաև հողային գործերի քննության կարգը: Մինչև այդ փոփոխությունը բոլոր հողային գործերը քննում էին դավառակային հողային հանձնաժողովները, Գլխավոր հողային հանձնաժողովը և հողային վեճերի վերաբերյալ հողային հատուկ Կոլլեգիան: Վերակազմությունից հետո հիշյալ բոլոր մարմինները լուծվեցին և հիմնվեցին ժողովրդական դատարանների հողային նստաչրջաններ ժողդատավորի նախագահությունամբ ու յերկու ժողատեսակալներ ժամանակցությունամբ. բացի դրանից հիմնվեց Գերագույն Դատարանի հողային Կոլլեգիա, վորպես ժողդատարանների հողային նստաչրջանների վորոշումները քննող վճռարեկ ատյան:

Ռեֆորմը կիրարկելուց հետո մեր դատական հիմնարկների ամբողջ սխտեմն այժմ այսպիսի կառուցվածք ունի.—

Դատական ապարատի հիմնական բջիջը, վորի հետ ամենից ավելի առնչութիւնն և շփում ունեն ժողովրդական մասսաները, և վորը քննում և դատական գործերի ճշող մեծամասնութիւնը, — ժողովրդական դատարանն է։ Ավելի լուրջ և կարևոր քաղաքացիական և քրեական գործերի քննութիւնն համար գործում և Գերագոյն Դատարանի ընդհանուր և հատուկ իրավասութիւնն Դատական Կոլլեգիան։

Գերագոյն Դատարանի մյուս կոլլեգիաները վճռաբեկ ատյան են հանդիսանում ինչպես ժողովրդական դատարանների, այնպես և Գերագոյն Դատարանի ընդհանուր իրավասութիւնն դատական կոլլեգիայի կապարած վճիռների վերաբերմամբ։

Այդ դատական մարմինների գործունեութիւնն վրայի մենք այժմ կենդ կառնենք։

II. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԸ.

Խորհրդային դատարանի հիմնական խնդիրն և պաշտպանել հասարակական կարգը և աշխատավոր ընտելութիւնն շահերը։ Խորհրդային իշխանութիւնն առաջին իսկ որերից դատարանները այնպես են կառուցված, վոր աշխատավորութիւնն առավել լայն մասսաները կապված լինեն նրա հետ, հնարավորութիւնն ունենան մասնակցելու նրա աշխատանքներին։

Այս նպատակով թե քաղաքացիական և թե քրեական գործերի վերաբերյալ վճիռները կայացնում և վոյթի միայն դատավորը, միանձնաբար, այլ յերկու ժողովրդական ատենակալների մասնակցութեամբ, վորոնք հանդիսանում են աշխատավոր բնակչութիւնն յեր-

կու ներկայացուցիչները։ Ժողովրդական ատենակալները ընտրվում են աշխատավոր մասսաներից կարճ ժամանակով, վորպեսզի վորքան հնարավոր է մեծ թիւով աշխատավորներ հերթով մասնակցեն դատարաններին կողմից վճիռներ կայացնելուն։ Ժողովրդական ատենակալների դասակարգային դերը և նշանակութիւնը չատ մեծ է խորհրդային արդարադատութիւնն ասպարեզում, և վորքան ավելի ակտիւ լինեն ժողատենակալները, այնքան ավելի մեծ չափով կարելի յէ վերացնել դատական ձգձգումներն ու բյուրոկրատիզմը։

Արդժողովմատը միշտ առանձին ուղադրութիւնն և դարձրել այդ հանգամանքի վրա և ընտրական կամպանիայի ընթացքում վորոչ ցուցումներ և տվել պատշաճ մարմիններին, վորպեսզի նրանք աշխատանքի առնարեզ դրավեն, վորպես ժողատենակալներ, բանվորներին, բանվորուհիներին, մասնավորապես ազգային փոքրամասնութիւններից, կարմիր բանակայիններին և չքավոր ու միջակ ակտիւ աշխատավոր գյուղացիներին։

Պետք է արձանագրել, վոր ընդհանուր առմամբ ժողովրդական ատենակալները իրենց աշխատանքի ընթացքում բավարար ակտիւութիւնն հանդես չեն բերում. դատական նիստերին հաճախ չեն ներկայանում, իսկ գործերի քննութիւնն ընթացքում վորոչ ակտիւութիւնն չեն արտահայտում։

Արդժողովմատը ժողատենակալների ակտիւութիւնը բարձրացնելու համար հետևյալ միջոցներն են նշել. —

ա) կազմակերպել դատական աշխատավորների և ժողատենակալների միատեղ խորհրդակցութիւններ դատական աշխատանքի ընթացքում.

բ) բարելավել վոչ վարձու աշխատանքով ապրող ժողատենականների նյութական դրուժյունը, վճարելով նրանց որապահիկներ և ճանապարհածախք ժողատենականների պարտականությունները կատարելու ժամանակի համար:

դ) դատական ներգործության միջոցներ կիրարկել իրենց պարտականություններին պատասխան կերպով վերաբերվող ժողատենականների, ինչպես նաև հիմնարկությունների այն ղեկավարների վերաբերմամբ, վորոնք արգելք են հարուցում ժողատենականների դեմ ժամանակին դատարան ներկայանալու:

Այստեղ պետք է ընդգծել, վոր ժողատենականների վարձատրության վերաբերյալ վերոհիշյալ ձեռնարկումը մինչև այժմ չի կիրարկվում կշանքում՝ անհրաժեշտ միջոցներ չունենալու պատճառով:

Այրող չհանրապետության դատարանների հալմար 1928 թ. ընտրված է չեղել 7216 ժողատենական, վորոնցից տղամարդ—6,444 (89,3%) կին—772 (10,7%)։ դրանցից կուսակցականները կազմում են $\frac{\text{տղամարդ } 1883}{\text{կին } 87} (27\%)$, կոմյերիտ. — $\frac{\text{տղամարդ } 835}{\text{կին } 90} (13\%)$ ըստ սոցիալական դրության բանվոր $\frac{\text{տղամարդ } 785}{\text{կին } 38} (11\%)$, դուղացի $\frac{\text{տղամարդ } 3097}{\text{կին } 131} (45\%)$, ծառայող $\frac{\text{տղամարդ } 2258}{\text{կին } 417} (37\%)$ և այլն:

2. ԺՈՂԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՅԱՆՅԸ

Ժողդատարանների թիվը առ 1928 թ. հունվարի 1-ը ամբողջ հանրապետության մեջ հավասար է 40-ի: 1928 թ. առաջին կիսամյակի ընթացքում ժողդատար-

րանների թիվը ավելացել է նաև յերկուսով (Դնեդուս և Թալինում):

Յուրաքանչյուր ժողդատարանին ներկայումս ընկնում է միջին թվով 21,500 բնակիչ, մինչդեռ 1927 թ. առաջին կիսամյակին ընկնում էր 30,000 բնակիչ:

Ժողդատարանների ընդհանուր թվից (42) հինգը հատկապես ազգային փոքրամասնության համար են հիմնված: Նրանցից չորսը—Յերևան քաղաքում, Ադրաբայում, Վեդի-բասարում և Կարմիր դուղում—Թուրք ազգային փոքրամասնության, իսկ մեկը—Վարանցովկայում—ռուս ազգային փոքրամասնության համար են:

Այդ հինգ դատարաններում ամբողջ դատավարությունը կատարվում է անգլի ազգային փոքրամասնության լեզվով, այսինքն՝ բոլոր դիմումները, արձանագրությունները և վորոշումները գրվում և դատավարությունը կատարվում է համապատասխան ազգային փոքրամասնության լեզվով:

3. ԺՈՂԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ժողդատարանների կատարած աշխատանքի մասին ընդհանուր դադափար կազմելու համար անհրաժեշտ է բերել թվական տվյալներ: 1927 թ. ընթացքում հանրապետության տերրիտորիայի վրա գործող 40 ժողդատարանները քննել են 56,260 գործ, վորոնցից քաղաքացիական՝ 29,965, քրեական—22,377, աշխատանքային—քրեական և աշխատանքային—քաղաքացիական՝ 3918: Նույն տարվա վերջում ժողդատարաններում չավարտված մնացել է ընդամենը 5145 գործ:

Հատուկ աշխատանքային դատարանների թիվը միայն յերկուսի—մեկը Յերևան քաղաքում, իսկ մյուսը Լենինականում: Մնացած վայրերում գործում են ժող-

գատարանների աշխատանքային նստաշրջանները, վորոնք քննում են թե քրեական և թե քաղաքացիական աշխատանքային գործերը: 1928 թ. առաջին կիսամյակի ընթացքում ժողդատարանները ընդամենը քննել են 28,971 գործ, վորից՝ քրեական 7,224, քաղաքացիական—14,757, հողային 4188 աշխատանքային—բրեական՝ 101, քաղաքացիական—2701: Նույն 1928 թ. առաջին կիսամյակի վերջում, այսինքն՝ հուլիսի 1-ին ժողդատարաններում մնում էր 7,341 անավարտ գործ:

1927 թ. համեմատությամբ ավարտված գործերի թիվը ավելացել է 11,4%-ով, չհաշված դատական սեկցիաների գործերը:

4. ԺՈՂԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Արդժողկոմատի տրամադրության տակ յեղած տեղեկություններից յերևում է, վոր ժողդատարանների վարույթում գտնվող գործերի միջին տևողությունը 45-60 օր է, իսկ աշխատանքային գործերի տևողությունը մոտ 20 օր: Յեթե համեմատելու լինենք գործերի տևողությունը 1927 թ. հետ, կտեսնենք, վոր 1927 թ. ընթացքում աշխատանքային գործերի տևողությունը յեղել է միջին հաշվով 30-45 օր: Աշխատանքի գործերի տևողության կրճատումը մասամբ հետևանք է Գերագույն Դատարանի հատուկ հրահանգի, վորի հիման վրա գործերը պետք է լուծում ստանան մեկ ամսվա ընթացքում:

Գործերի արագ լուծումը բարձրացնում է ժողդատարանների հեղինակությունը աշխատավորության աչքում, ուստի անհրաժեշտ է, վոր ժողդատարանները վոչ միայն աշխատանքային, այլ և մնացած բոլոր գործերը նույնպես լուծեն մեկ ամսվա ընթացքում. այս

իմաստով Արդժողկոմատի կողմից համապատասխան կարգադրություն է արված:

Ժողդատարանների վարույթի մեջ կան նաև գործեր, վորոնք ձգձգվում են ամիսներով, նույնիսկ մեկ տարուց ավելի: Այդչերեկութը անթույլատրելի չէ, և Գերագույն Դատարանի կողմից ժողդատարաններին անհրաժեշտ հրահանգ է տրված անձնական պատասխանատվությամբ կարճ ժամանակամիջոցում լիկվիդացիայի յենթարկել այդ գործերը:

5. ԺՈՂԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԸ

Ժողդատարանները մասսաներին մոտեցնելու և գատարանների աշխատանքները թեթևացնելու տեսակետից մեծ նշանակություն ունի գործերը նստաշրջաններում լսելը. 1928 թ. առաջին կիսամյակում ժողդատարանների նստաշրջանները քննել և ավարտել են 2932 գործ, վորից քրեական 588, քաղաքացիական 1545, հողային 613 և աշխատանքային—86:

Փոխադրական միջոցների բացակայության պատճառով ժողդատարանները հնարավորություն չունեն ավելի հաճախ նշտաշրջաններ նշանակելու. այս համադամքը կարևոր է, ուստի անհրաժեշտ է առանձին ուղադրություն դարձնել այդ բացը վերացնելու վրա:

6. ԺՈՂԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

Ժողդատարաններում 1927 թ. քննված գործերը ընդհանուր դեղրով կարելի չէ այսպես բնութագրել.

Բաղադրական գործեր.—Քաղաքացիական գործերից ամենատարածվածները այն գործերն են, վորոնք վերաբերում են գյուղական վայրերում պատճառած

իմաստները հատուցմանը, ամուսնալուծությանը և նրա հետևանքներին կապված ապրուստի միջոց տալու և ղուլքի բաժանման հարցերին, վարկային կազմակերպությունների պահանջներին և մանր կենցաղային վեճերին: Քննվել են նաև ստրկացուցիչ գործարքների և հողի ֆիկտիվ վարձակալության վերաբերյալ գործեր: Քաղաքներում ժողատարանները գլխավորապես քննել են բնակարանային վեճեր, տոմարադրության կարգով սեփականության իրավունքը ձանաչելու վերաբերյալ հայցեր, քրեական գործերից առաջացած քաղաքացիական պահանջները և այլն: 1928 թ. նույն կատեգորիայի գործերի քանակը նույնպես ավելացել է:

Քրեական գործեր. — Քրեական գործերի մեջ կարեւոր տեղ են զբաղեւ կշանքի, առողջութեան և պատվի դեմ ուղղված հանցանքները, այն է՝ ծեծ և անձնական վիրավորանք. այնուհետեւ դայիս են վարչակարգի դեմ ուղղված հանցագործութեանները, վորոնցից առաջնայես անտառահատութեան, սրիկայութեան, հարկի յենկեակա առարկաները թաղցնելու, պաշտոնատար անձանց վիրավորելու և զինապարտները հաշվառման ու նախադիմակոչային պարտավունքները սրենքները խախտելու վերաբերյալ հանցագործութեանները և այլն :

1927 թ. մեծ տոկոս ելին կազմում կլանքի, առող-
ջության, ազատության և պատվի դեմ ուղղված հան-
ցանքները:—2-րդ տեղը բռնում ելին վարչակարգի և
3-րդ տեղը՝ ստացվածքի դեմ ուղղված հանցագործու-
թյունները: 1928 թ. պակասել են կլանքի, առողջու-
թյան, ազատության և պատվի դեմ ուղղված հանցանք-
ները շնորհիվ այն հանգամանքի, վոր վերավորանք
հասցնելու և ծեծի գործերը, վորոնք քրեական գործե-
րի զգալի տոկոսն ելին կազմում, հանձնվել են գուղ-

խորհուրդները դատական սեկցիաներին: 1928 թ. ա-
ռաջին կիսամյակի ընթացքում ժողդատարանները
ընկել և ավարտել են 6846 քրեական դործ:

Այլարտված քրեական գործերից՝

- | | | |
|----|--|------|
| 1. | Անտառային | 2232 |
| 2. | Գողության | 689 |
| 3. | Դիտավորյալ կերպով մարմնա-
կան վնասվածքներ հասցնելու | 669 |
| 4. | Սրբիկայության | 267 |
| 5. | Յուրաքանչյուր և մատնում | 266 |

Այս տոլլալներէից յերևում է, վոր ավարտված քրեական գործերի մեջ անտառային գործերը մեծ թիվ են կազմում: Արդեօղկոմատը դռնում է, վոր վոչ մի անհրաժեշտութիւն չկա անտառային գործերը դատական կարգով քննելու, և ավելի նպատակահարմար է այդ գործերը հանձնել վարչական մարմիններին. այդ դեպքում մեր դատարանների գործերի թիվը կպակսի և նրանք հնարավորութիւն կունենան զբաղվելու իրենց մրա դրված ամբի կարևոր խնդիրներով:

1928 թ. առաջին կիսամյակում ժողդատարանների կողմից կիրառված են հետևյալ սոցիալական պաշտպանութան միջոցները :

Սոցիալական պաշտպանութեան միջոցները այն
ուղղիչ միջոցներն են, զոր դատարանը կիրարկում է
հանցագործներէ վերաբերմամբ. որինակ, ազատու-
թյունէնց պրկելը, հարկադիր աշխատանք, տուգանք և
այլն :

Հիշյալ ժամանակաշրջանում դատապարտվել են 7487 հոգի, վերոնցից տուգանված են 5,235 հոգի (այս թվից միայն անտառային գործերի համար—4549 հոգի) :

2. Աղատադրության են յենթարկվել . . . 1,115
3. Պարտադիր աշխատանքների . . . 754
4. Պայմանականորեն սոցիալական պաշտ-
պանության միջոցների յեն յենթարկվել 287

Գատապարտվածների ընդհանուր թվից (7497) մեջակ գյուղացիներ յեղել են 4,167, չքավոր և բատ-
րակ—1895, ծառայողներ—491, վոչ-աշխատավորա-
կան տարրեր—412, կուլակներ,—297 և բանվորներ—
226:

Գատապարտվածներից 16-18 տարեկան անչափա-
հասներ յեղել են 163 հոգի, տղամարդ—7116, կին—
194:

Աշխատանքային գործեր.—Աշխատանքային քաղա-
քացիական գործերից 1927 թ. համեմատությամբ քա-
ղաքներում ավելացել են՝ պաշտոնի վերականգնման,
արտաժամյա աշխատանքի վարձատրության գործերը,
խակ շրջանների ժողդատարաններում—գլխավորապես
բատրակային գործերը:

Հողային գործեր.—Հողային գործերից ամենատա-
րածվածները վերաբերում են հողագտադրման իրա-
վունքից զրկելու, ծխերի բաժանության, հողաչինա-
րարության ու հողաբաժանության առթիվ ձագած վե-
ճերին և աշխատավորական հողերի վարձակալության
գործերին:

7. ԺՈՂԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՈՐԱԿԸ:

Մեր դատարանների կիրառած դատակարգային քա-
ղաքականութիւնը բնորոշելու տեսակետից կարելի յե
սանել հետևյալը.—

Ընդհանուր առմամբ մեր ժողդատարանների գոր-

ծունեութիւնը անցյալի հետ համեմատած՝ վորակով
բարձրացել է: Չնայած այն հանդամանքին, վոր գոր-
ծերի թիվը, առանձնապես քաղաքացիական գործերի
թիվը զգալի չափով աճում է, այնուամենայնիվ դա-
տարանները կարողացել են մասամբ ուշադրութիւն
դարձնել նաև վորակական կողմի վրա:

Պետք է ընդգծել այն փաստը, վոր ժողդատարան-
ների հեղինակութիւնը կամաց-կամաց բարձրանում է
ինչպես պետական և հասարակական մարմինների,
նույնպես և աշխատավորական լայն մասսաների աչ-
քում: Բայց այդ վստահութիւնը տեւական դարձնելու
և խորացնելու համար ժողդատարանները պետք է ել
ափելի մոտենան մասսաներին, վերջ տան դեռ ևս շա-
րունակիլով ձգձգումներին և դասակարգային հետե-
ղական քաղաքականութիւն կիրառեն իրենց ատորյա
գործունեության ընթացքում:

Այս ասպարեղում տեղական կուսակցական, խոր-
հրդային և արհեստակցական կազմակերպութիւնները
պետք է ավելի ևս աջակցեն ժողդատարաններին թե
լիզեոլոգիապես և թե ֆինանսական անհրաժեշտ մի-
ջոցներով:

Արդարադատության գործը տեղերում ավելի ա-
պահով հունի մեջ դնելու համար անհրաժեշտ է վոչ
միայն համապատասխան դատավորների խիստ ընտրու-
թիւն կատարել, այլ և մոտիկից հետևել նրանց աշ-
խատանքներին, հերթական ղեկուցումներ լսելով, գա-
վառական խորհրդակցութիւններ կազմակերպելով և
մանավանդ աջակցելով այս ասպարեղում առաջ քաշ-
ված բանվոր և գյուղացի ընկերներին:

Մյուս կողմից՝ նկատի առնելով, վոր ժողդատա-
րանների ցանցը բավական ընդլայնված է, և հետզհէ րե

գործունեութեան բաղադրանքներն են ըստեղծվում, հնարավոր և անհրաժեշտ և այսուհետև ավելի պահանջկոտ լինելի դեպքի ժողդատավորները վոչ միայն նրանց անմիջական աշխատանքները, այլև հասարակական գործունեութեան տեսակետից:

8. ԺՈՂՂԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԻՆՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՄԻՋԱԲԱՐ ՄԱՍՍԱՆՆԵՐԻ ՄԵՋ ԿԻՐԱՐԿԵԼՈՒ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ:

Հաշվետու շրջանում հեղափոխական որինականութուն կիրարկելու համար Արդժողկոմատի կողմից դատական մարմիններին տրվել են համապատասխան հրահանգներ:

Այս ասպարեղում դատական մարմինները հետևյալ աշխատանքներն են կատարել.—

ա) ուժեղացրել են իրենց շրջադաշնությունը, մեկնելով վոչ միայն դավառական ու դավառակային կենտրոնները, այլ նաև գյուղերը:

բ) շրջադաշնության ժամանակ տեղերում կազմակերպել են ցուցադրական դատավարություններ այն գործերի վերաբերմամբ, վորոնք հասարակական խոշոր նշանակություն են ունեցել կամ շատ տարածված են լիդել ավյալ վայրում:

գ) տեղերում ընդունել և քննել են խնդիրներ, գանդատներ և այլ դիմումներ:

դ) պրոպագանդա յեն միդել և ժողովրդականացրել են մասսաների մեջ խորհրդային իրավակարգի գաղափարները, աշխատավորների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ՀՍԽՀ, ԱՍՖԽՀ և ԽՍՀՄ:

կարելի որ որենսդրական ակտերի իմաստն ու նշանակությունը:

ե) պարբերաբար ինֆորմացիոն զեկուցումներ են տվել դատական մարմինները գործունեութեան մասին խորհրդային, կուսակցական, արհեստակցական և հասարակական կազմակերպությունների առաջ, և այլն:

Անհրաժեշտ և յերկու խոսք առել նաև դատական կատարածությունների և դատապաշտպանների կողմից յայլ մասին:

9. ԴԱՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐ:

Դատավճիռների արագ կատարումը դեռ չի ապահովված: Վճիռների կատարման միջին տեղությունը հաշվետու ժամանակաշրջանում յեղել և յերկու ամիս: Նկատված ձգձգումների հիմնական պատճառը դատական կատարածությունների անբավարար լինելն է:

Ներկա բյուջետային տարվանից սկսած յուրաքանչյուր ժողդատարան կունենա իր դատական կատարածուն, վորից հետո կարելի կլինի վճիռների ավելի կանոնավոր և արագ կատարումը ապահովել, առանձնապես պետական ուղանքների վրա դարձված, ինչպես նաև աշխատավարձի և ապրուստի միջոցի վերաբերյալ գանձումների ասպարեղում:

10. ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԿՈՂԼԵԳԻԱ

Դատապաշտպանների կողմից յայլ աշխատանքները բավարար չափով ժողովրդականացված չեն, դատապաշտպանների կողքը թարմացված չե, նոր ուժեր ասպարեղ չեն քաշված: Բավարար չի կարելի համարել

նաև կոնսուլտացիոն աշխատանքները, այսինքն՝ բնակչությանը իրավաբանական ոգնություն ցույց տալու գործը, մինչդեռ հենց այս աշխատանքը դատապաշտպանները կոլլեգիայի հիմնական անելիքներից մեկն է։ Այս բացերը վերացնելու համար Արդժողկոմատի կողմից համապատասխան միջոցներ են ձեռք առնված։ Դատապաշտպանության ասպարեզում աշխատողների թիվն է 34 ամբողջ հանրապետության մեջ։

III. ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒՅՑՈՒՆԸ

ՀՍԽՀ Գերագույն Դատարանը հիմնվել է Կենտրոնական Նախագահության 1925 թ. հունվարի 24-ի վորոշման համաձայն։ Գերագույն Դատարանը, մի կողմից՝ վորոշ կատեգորիայի քրեական և քաղաքացիական գործեր քննող դատարան է (ընդհանուր և հատուկ իրավասություն)․ այդ կարգի գործերը Գերագույն Դատարանը քննում է նաև մեկ անգամի ու յերկու ժողատենակալի կազմով․ մյուս կողմից՝ Գերագույն Դատարանը վճռաբեկ դատարան է ժողովրդական դատարանների և Գերագույն Դատարանի ընդհանուր իրավասության դատական կոլլեգիայի կապցրած բոլոր վճիռների ու դատավճիռների վերաբերմամբ։ Վերջապես, Գերագույն Դատարանը առհասարակ բոլոր դատարանների գործունեության վրա հսկող մի մարմին է, վոր կարող է ինքը, առանց վորևե բողոքի, Հանրապետության բոլոր դատարաններից պահանջել ամեն մի գործ և հսկողության կարգով քննել այդ գործը, թեկուզ այն արդեն վճռված և ավարտված լինի (Գերագույն Դատարանի Պլենումը)։

Գերագույն դատարանի կապը տեղերի հետ պահ-

պանվում է շրջաբերականներով, վերստուգումներով այլ և ժողդատավորների գործունեության վերաբերյալ ղեկուցումներով, վոր նրանք անում են Գերագույն Դատարանի Պլենումում։

Այդ ղեկուցումները քննադատվում են, և դատավորներին ցուցումներ ու բացատրություններ են տրվում դատական գործունեության այս կամ այն հարցի մասին։

Ներկայումս Գերագույն Դատարանը ունի հետևյալ կոլլեգիաները․—ընդհանուր իրավասության դատական կոլլեգիա, վորպես նախադատ ատյան, և քաղաքացիական, քրեական, աշխատանքի ու հողային վճռաբեկ կոլլեգիաներ․ բացի դրանից Գերագույն Դատարանը ունի նաև կարգապահական կոլլեգիա։ Կանգ առնենք Գերագույն Դատարանի վճռաբեկ կոլլեգիաների գործունեության, ինչպես նաև այն հարցի վրա, թե Գերագույն Դատարանը իր գործունեության ընթացքում ինչ դատակարգային գիծ է վարել։

Քաղաքացիական վճռաբեկ կոլլեգիա․—Քաղաքացիական վճռաբեկ կոլլեգիան յեւակետ է ունեցել այն հիմնական սկզբունքը, վոր համաձայն գործող որենսդրության քաղաքացիական իրավունքները դատական պաշտպանության են արժանանում այն ղեկավարում և այն չափով միայն, վորը համապատասխանում է նրանց սոցիալ-տնտեսական նպատակին․ միաժամանակ Քաղաքացիական վճռաբեկ կոլլեգիան ղեկավարվել է խորհրդային իշխանության քաղաքականության այն սկզբունքով, վոր սոցիալիստական տնտեսության նվաճումների և, հետևապես, մասնավոր կապիտալիստական սեկտորի սահմանափակման հետ զուգընթաց մասնավոր կապիտալին վերապահված գույքային իրա-

վունքների յերաշխիքները հետզհետե պետք է նվազեն, մասնավորապես իրավահարաբերությունների այն բընազավառում, (որին. առևտուր), վորտեղ մասնավոր կապիտալը ամենից քիչ է նպաստում յերկրի արտադրական ուժերի զարգացման գործին: Այդ սկզբունքներով ղեկավարվելով՝ Բաղաքացիական Վճռարեկ Կոլլեգիան համապատասխան գիծ է վարել իր ընթացիկ գործունեության մեջ:

Թե ինչպիսի գործունեություն է ունեցել Բաղաքացիական Վճռարեկ Կոլլեգիան, այդ յերևում է հետևյալ տվյալներից. —

1928 թ. առաջին կիսամյակի ընթացքում Բաղաքացիական Վճռարեկ Կոլլեգիա յե մտել ընդամենը 1447 գործ, ամսական միջին հաշվով 241 գործ, անցյալ տարվա 186 գործի հանդեպ. սրանից յերևում է, վոր վճռարեկ գործերը զգալի չափով աճել են ընթացիկ տարում:

Բաղաքացիական Կոլլեգիան հիշյալ ժամանակաշրջանում քննել է 1343 գործ, ամսական միջին հաշվով 224 գործ, մինչդեռ 1927 թ. ամսական միջին թվով քննվել է 218 գործ:

Բեկման կարգով քննված հիշյալ 1343 գործից բեկանված է միայն 252 գործ, այսինքն՝ 18,7 տոկոսը 1927 թ. 23,7 տոկոսի հանդեպ: Բեկանված գործերի տոկոսը իջնում է 1,7-ի, յեթե փոխանակ բեկման կարգով մտած գործերի քանակը նկատի ունենալու հաշվի առնենք նույն ժամանակաշրջանում ժողդատարանների կողմից լուծված քաղաքացիական գործերի ընդհանուր թիվը:

Քրեական վնասների կոլլեգիա. — Քրեական Կոլլեգիան իր աշխատանքների ընթացքում այս կամ այն

հանցագործությանը մոտեցել է այն տեսակետից, թե արդյո՞ք տվյալ հանցագործությունը սոցիալապես վորքան վտանգավոր է, և յերբ յեկել է այն յեղրակացության, վոր կատարած հանցագործությունը իր սոցիալական վտանգավորությամբ սպառնում է բանվորագյուղացիական իշխանության իրավակարգին և յերկրի սոցիալիստական շինարարությանը, ապա բոլոր նման դեպքերում հանցագործների վերաբերմամբ վարել է ռեպրեսիվ քաղաքականություն: Նույն քաղաքականությունը Քրեական Վճռարեկ Կոլլեգիան վարում է և այն հանցագործությունների վերաբերմամբ, վորոնք խոչընդոտ են հանդիսանում գյուղական անտեսությունը կոլլեկտիվիզացիայի յենթարկելու գործում: Մնացած հանցագործությունների վերաբերմամբ Քրեական Վճռարեկ Կոլլեգիան ընդհանուր առմամբ խուսափել է խստություններից, իհարկե այն դեպքերում, յերբ այդ հանցագործությունները սոցիալապես վտանգավոր չեն յեղել:

Ինչ վերաբերում է Քրեական Վճռարեկ Կոլլեգիայի քննած գործերին, ապա ունեցած տվյալների հիման վրա պետք է ընդգծել հետևյալը. —

1928 թ. առաջին կիսամյակի ընթացքում քրեական Վճռարեկ Կոլլեգիան է մտել 2270 գործ, մինչդեռ 1927 թ. մտել է 2226 գործ. 1927 թ. բեկանվել է բոլոր բողոքարկված գործերի 9,2 տոկոսը, իսկ 1928 թ. առաջին կիսամյակում բեկանված գործերի տոկոսը կազմում է 8,5:

Անցնելով ժողդատարանների կողմից նշանակված սոցիալական պաշտպանության միջոցները Քրեական Վճռարեկ Կոլլեգիայի կողմից մեղմացնելու հարցին, պիտք է նկատեր հետևյալը. —

1927 թ. ընթացքում 1883 հաստատված գործերից սոցիալական պաշտպանութան միջոցը մեղմացված է 203 գործի վերաբերմամբ, վոր կաղմում է 11%, իսկ 1928 թ. առաջին կիսամյակի ընթացքում 1884 հաստատված գործերից մեղմացված է 188 գործի նկատմամբ, վորը կաղմում է 10% : Այդ բոլոր գործերի վերաբերյալ սոցիալական պաշտպանութան միջոցները մեղմացված են Գրեական վճռաբեկ Կոլլեգիայի կողմից այն դեպքերում, յերբ ժողդատարանների կողմից նշանակված սոցիալական պաշտպանութան միջոցները ակնհայտնի անհամապատասխան են յեղել դատապարտվածի արարքին, կամ միջոցները մեղմացված են համաձայն ներման ակտի :

Աշխատանքի վնասեկ Կոլլեգիա.—Աշխատանքի պաշտպանութան ասպարեզում աշխատանքի կոլլեգիան ղեկավարվել է այն հիմնական սկզբունքով, վոր վարձու աշխատանքի պաշտպանութունը չկատարվի ի վնաս սոցիալիստական տնտեսութան շահերի : Այս տեսակետից կոլլեգիան պայքարել է վերոհիշյալ ճիշտ սկզբունքից կատարված բոլոր չեղումների դեմ, յերբ վարձու աշխատանքի շահերը հակադրվել են պետական շահերին կամ, ընդհակառակը, պետական շահերը պաշտպանվել են ի վնաս աշխատավորի օրինական շահերի :

Ինչ վերաբերում է բատրակների շահերի պաշտպանութան, ապա Աշխ. Կոլլեգիան ժողդատարաններին հրահանգել է, նախ, աշխատել, վորպեսզի բատրակների աշխատավարձը բարձրացվի, յերկրորդ՝ բատրակներին աշխատանքի կանոնները խախտողների նկատմամբ կիրարկել սոցիալական պաշտպանութան խիստ միջոցներ, մանավանդ կուլակների նկատմամբ :

Այդ նպատակով ժողդատարանների ուղադրութունը հրավիրված է այն հանգամանքի վրա, վորպեսզի սոցիալական պաշտպանութան միջոցներ ընտրելիս նրանք նկատի ունենան կուլակի և միջակի նկատմամբ իշխանութան վարած քաղաքական դիժը :

Գալով քննված գործերի քանակին, պետք է ասել, վոր 1928 թ. կիսամյակի ընթացքում կոլլեգիայի վարույթում յեղել է 249 գործ. անցյալ 1927 տարվանից վոխանցված է յեղել միայն 10 գործ, վորով գործերի թիվը ընդամենը յեղել է 359 : Անցյալ տարվա հետ համեմատած՝ վճռաբեկութան կարգով կոլլեգիայի վարույթում յեղած գործերի թիվը գրեթե կրկնապատկվել է, յեթե նկատի ունենանք, վոր ամբողջ տարվա ընթացքում աշխատանքային վճռաբեկ գործերի ընդհանուր թիվը յեղել է 396 :

Ժողդատարանների կողմից նույն ժամանակաշրջանում լուծված է 2701 աշխատանքային-քաղաքացիական և 101 քրեական գործ, ընդամենը 2802 գործ, մինչդեռ ամբողջ 1927 թվի ընթացքում յեղել է ընդամենը 4211 գործ. հետևաբար, մի տարվա ընթացքում մոտ 1500-ով աճել է գործերի թիվը, իսկ մոտ 100%-ով աճել է նաև վճռաբեկութան կարգով մտած գործերի թիվը. բեկման տոկոսը կաղմում է 33,3%, իսկ ժողդատարանների քննած աշխատանքային գործերի ընդհանուր թվի համեմատությամբ—միայն 2% :

Կոլլեգիան հաշվետու կիսամյակի ընթացքում վոչ միայն գործերի վորեւ կուտակում չի ունեցել, այլ և հնարավորութուն է ունեցել մտած գործերը ամենաուշը մի շարավիճակում ընթացքում ավարտելու :

Հողային վնասեկ Կոլլեգիա.—Հողային կոլլեգիան գործում է միայն վերջին 5-6 ամսում, յերբ հո-

IV. ԴԱՏԱԻԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գերագույն Դատարանի դատախազության գլուխ և կանգնած Հանրապետության Դատախազի ավագ ոգնականը, վոր գործում և Գերագույն Դատարանին առնթեր և ամբողջ դատախազության գործունեության համար պատասխանատու յե Հանրապետության Դատախազի առաջ: Գերագույն Դատարանի դատախազին առնթեր դործում են նրա ոգնականները, այն ե՝ ընդհանուր հսկողության դատախազը, դատական և վճարակ կոլլեգիաների դատախազները. բացի դրանից դավառներում աշխատում են 11 գավառական դատախոհներ:

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես նախորդ տարիներում, այնպես և հաջվետու շրջանում, գավառական դատախազների գործունեությունը ղեկավարելու համար ա) տեղերին հրահանգներ են տրվել ղեկավար շրջաբերականների միջոցով, բ) առանձին դատախազները կանչվել են կենտրոնական դատախազություն, գ) դատախազներին նրանց ներկայացրած յեռամսյա ղեկուցումների ու վիճակագրական հաշվետվությունների առթիվ պատշաճ ցուցումներ են տրվել, դ) տեղերից հարուցված առանձին հարցերի մասին տրվել են պարզաբանումներ:

Ինչ վերաբերում և ղեկավարության կենդանի մեթոդներին, այն ե՝ դատախազության աշխատավորներին խորհրդակցություններ ու համագումարներ հրավիրելուն, դատախազների գործունեության ստուգման ու հետադոտությանը, ապա այդ միջոցները ոգտագործ-

ղային հանձնաժողովները վերացվեցին, և հողային գործերը հանձնվեցին ժողովրդական դատարաններին հողային նստաշրջաններին: Այդ կարճ ժամանակամիջոցում հողային կոլլեգիան չեր կարող կարգավորել այն բոլոր հարցերը, վորոնք արգելք եյին հանդիսանում վերացված հողային հանձնաժողովների աշխատանքի ընթացքում: Այնուամենայնիվ, ղեկավարության այդ կարճ ժամանակամիջոցում Գերագույն Դատարանը լուծել և հողային գործերի վերաբերյալ մի շարք հարցեր, վորոնցից պետք և նշել հետևյալները. կարգավորված և գյուղացիական ծխի բաժանության հարցը, ստեղծված են հողային գործերի ընթացքը դատական մարմիններում արագացնելու պայմաններ, պայքար և մղված ձգձգումների դեմ և այլն: Աշխատավորական հողագործական տնտեսությունների բաժանման հարցում հողային կոլլեգիան ղեկավարվում և այն սկզբունքով, վոր ել ավելի չամրանան գյուղացիական աշխատավորական տնտեսությունները, վորոնք սուանց այն ել դաճաճային բնույթ են կրում. ուստի իր վորոշումների մեջ հողային կոլլեգիան ցուցումներ և առլիս դատարաններին, վորպեսզի ծխերի բաժանման հարցերը ընենլիս նրանք լայն չափերով ոգտվեն հողային Որենսդրքի 80 հոգվածից, այսինքն՝ հողային նստաշրջանները ամենից առաջ պարզեն, թե հնարավոր և արդյոք ծխից բաժանվել ցանկացող անդամներին տեղավորել հողային հասարակության պահեստի հողերի վրա, և միայն այդպիսի հնարավորություն լինելու դեպքում թույլ տան բաժանել ծխի հողերը: Հողային վճռար. կոլլեգիայի կողմից հաստատված և հողային նստաշրջանների վորոշումների 69,1%-ը, բեկանված և 27,1%-ը, և կարճված և 2,5%-ը:

վել են հնարավորութեան սահմաններում: Հաշվետու շրջանում վերստուգման են յենթարկվել 5 առանձին դատախազական շրջաններ, կատարվել է 5 հետադուրստութուն, տեղի յե ունեցել դավառական դատախազների 1 համագումար և դավառական 4 խորհրդակցութուն: 1927 թ. հրատարակվել է 30 ղեկավար շրջաբերական, 1928 թ. առաջին կիսամյակում—28 շրջաբերական, ընդամենը 58: Անկախ դրանից, տեղերին ուղարկված հրահանգչական նամակներով պարզաբանվել է, թե դատախազութունը ինչ յեղանակով պետք է իրագործի կուսակցական այն հրահանգները, վորոնք վերաբերում են դատախազութեան կողմից գյուղում կատարվելիք աշխատանքներին:

Դատախազութեան այդ անելիքները ամենամեծ չափով կապված են կուսակցութեան 15-րդ համագումարի վորոշումների հետ. այդ անելիքները պիտի ընթանան յերեք զլխավոր ուղղութեամբ—ա) պայքար հողի ազդայնացման որենքի խախտումների դեմ, բ) չքավորութեան և բատրակների իրավունքների պաշտպանութուն և գ) հսկողութուն գյուղմխասարկի և ինքնահարկման որենքների կիրառման վրա:

2. ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ա. Աշխատավորների ժողովներում հանդես գալը.— Աշխատավոր մասսաներին հեղափոխական որինականութեան խախտումների դեմ մղվող պայքարին մասնակից անելու համար անհրաժեշտ է ամուր կապ հաստատել մասսաների հետ: Այս նպատակով դատախազութունը տեղերում և կենտրոնում սխտեմատիկաբար հանդես է յեկել աշխատավորների ընդհանուր ժողով-

ներում թե ընդհանուր—իրավական և թե հեղափոխական որինակութեան խախտման հետ կապված առանձին հարցերի առթիվ:

Ընդամենը այդպիսի ղեկուցումներ են տրվել 1927 թ. 571 անգամ, 1928 թ. առաջին կիսամյակում—235 անգամ:

Բ. Մամուլի ոգտագործումը խորհրդային իրավունքը ժողովրդականացնելու նպատակով.—Դատախազութունը թե տեղերում և թե կենտրոնում հաճախ ոգտագործել է մամուլը խորհրդային իրավունքի վերաբերյալ հարցերն ու գործող որենքները լուսաբանելու համար, սակայն այդ աշխատանքը դեռ ևս բավարար և կանոնավորված չի կարող համարվել:

Գ. իրավաբանական ոգնութուն.—Ձգալի աշխատանք է կատարել դատախազութունը գյուղական բնակչութեանը իրավաբանական ոգնութուն ցույց տալու ասպարեզում, թե անմիջաբար իրավաբանական խորհուրդներ տալով և թե տեղերում իրավաբանական բյուրոներ, տեղեկատու սեղաններ և այլ ձեռնարկումներ կազմակերպելու հարցում նախաձեռնութունն իր վրա վերցնելով: Բնակչութեանը իրավաբանական ոգնութուն ցույց տալու գործում մեծ նշանակութուն ունի ժողկոմխորհի 1928 թ. վորոշումը, վորով առաջարկվում է ժողովրդական դատաբաններին կից կազմակերպել իրավաբանական բյուրոներ, ժողովրդական դատավորի նախագահութեամբ և դավառական դատախազի, դատապաշտպանների կուլլեգիայի անդամների և արհեստակցական կազմակերպութունների ու փոխոգկոմների ներկայացուցիչների անդամակցութեամբ:

Դ. Հասարակական մեղադրողներ.—Այս ուղղու-

թյամբ աշխատելու փորձեր կատարված են դատախազության գոյություն համարյա առաջին իսկ օրերից, սակայն հասարակական մեղադրողների կադր ստեղծելու գործը հաջողություն չի ունեցել. սրա պատճառները չափ են, նախ՝ գյուղացիական մասսաների կուլտուրական մակարդակը ցած է, յերկրորդ՝ ցրված են այն անձինք, վորոնց կարելի չե այդ նպատակով ոգտադործել բացի դրանից զգացվում է ակտիվ ուժերի պակասություն Արդժողկոմատի ապարատում: Այժմ արդեն մշակվում են նոր ձևեր, վորոնք հնարավորություն կտան ապագայում ունենալու հասարակական մեղադրողներ:

3. ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Դատախազության գյուղում կատարած աշխատանքի հիմնական յեղանակը—այդ գյուղացիական մասսայի հետ կենդանի անմիջական կապ պահպանելն է. այս նպատակով դատախազները մեկնում են գյուղերը, ժողովներում զեկուցումներ են անում, զրույց են ունենում գյուղացիների հետ, ընդունում են զանգատներ ու զանազան դիմումներ և ըստ հնարավորության հենց տեղում քննում և լուծումն են տալիս այդ դիմումներին, ինչպես նաև անմիջական իրավաբանական ոգնություն են ցույց տալիս գյուղացիներին: Միաժամանակ դատախազները գյուղում յեղած ժամանակ, ոգտվելով առիթից, հետադրոտում են գյուղական այն մարմինների գործունեությունը, վորոնց հետ չփում և առնչություն ունի գյուղացիական մասսան: Ընդհանուր առմամբ դատախազության աշխատանքը գյուղում 1927 թ. ընթացքում թե վորակապես և թե քանակապես անկասկած

լավացել է և մասսայական բնույթ է կրել: Ձեռքի տակ յեղած տվյալներից յերևում է, վոր դատախազները 1927 թ. ընթացքում գյուղում յեղել են 512 օր, 1928 թ. առաջին կիսամյակում 345 օր: 1927 թ. ընթացքում կատարվել է ստորին մարմինների 273 հետադրոտություն. 1928 թ. ընթացքում—321: Բացի դրանից 1927 թ. տեղերում դատախազները մասնակցել են 32 կամպանիայի, 1928 թ. առաջին կիսամյակում—27-ի: 1928 թ. նույն առաջին կիսամյակում զավառական գործկոմների պլենումներում դատախազները արել են 11 զեկուցում, իսկ գյուղխորհուրդների նիստերում և գյուղական ժողովներում—138 զեկուցում:

Գյուղում յեղած ժամանակ դատախազներն անմիջաբար ընդունել են ու լուծել 320 գրավոր զանգատ, վորից բավարարված է 282-ը: Այդ զանգատների հետևանքով դատախազությունը հարուցել է զավզործկոմների զեմ 1 գործ, գյուղխորհուրդների նախագահների զեմ—9 գործ, կոոպերացիայի աշխատավորների զեմ—7 գործ, միլիցիայի աշխատակիցների զեմ—20 գործ և այլն:

Դատախազությունը մասնակցել է նաև ժողդատաբանների տեղերում կադակերպված նստաչրջանների աշխատանքներին:

Կենտրոնական դատախազությունը, նկատի ունենալով գյուղական իրականությունը, մշակել է համապատասխան միջոցներ կուսակցության և իշխանության քաղաքականությունը գյուղում յեղաթյուրելու զեմ պայքարելու համար:

4. ԳԱՆԳԱՏՆԵՐ ՅԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐ

Դատախազության անունով տրվող զանգատների

և զիմումների թիվը տարեցտարի ավելանում է. այս հանգամանքը վկայում է, մի կողմից, վոր դատախազության հեղինակությունը բարձրացել է աշխատավոր մասսաների աչքում, և մյուս կողմից՝ բարձրացել է նույն մասսաների հասարակական-քաղաքական ինքնագործունեությունը:

1928 թ. առաջին կիսամյակում դատախազությունը ընդունած 2613 գանգատներից և զիմումներից 605-ը դատախազությունը քննություն չի առել և ուղարկել է համապատասխան հիմնարկություններին ըստ պատկանելության: Դատախազական քննություն չենթակա 2008 գանգատներից առ 1-ն հուլիսի 1928 թ. քննվել և ավարտվել է 1904 գանգատ (95%):

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հեղափոխական օրինականությունը կենսագործելու համար մղվող պայքարի ելական միջոցներից մեկը իշխանություն տեղական մարմինների անօրինական վորոշումներին և կարգադրություններին բողոքարկումն է դատախազության կողմից: Պայքարի այդ միջոցը դատախազությունը ոգտագործել է լայն չափերով, հսկողություն ունենալով իշխանություն բոլոր մարմինների գործունեությունի վրա, սկսած գյուղխորհուրդից մինչև ժողկոմատները:

Իշխանություն տեղական մարմինները դատախազության նշանակությունը լիովին գնահատել են և բացառիկ դեպքերում միայն հարկադրել են դատախազությունը իր բողոքները հասցնել մինչև Կենտգործկոմ: 1927 թ. ընթացքում դատախազությունը հսկողության կարգով նայել է իշխանություն գանադան մարմիններին

1049 վորոշում, իսկ 1928 թ. առաջին կիսամյակում— 866: Բողոքարկումների թիվը 1927 թ. ընթացքում հասնում է 118-ի, իսկ 1928 թ. առաջին կիսամյակում 193-ի: Գլխավորապես բողոքարկված են յեղել պարտադիր վորոշումները և արձանագրական վորոշումները: Բոլոր բողոքները, չնչին բացառությամբ, գործկոմների և ժողկոմատների կողմից բավարարված են ժողկոմատների կողմից բավարարված են յեղել անվի-յեղել անվերապահորեն:

Ինչ վերաբերում է դատական սեկցիաների վճիռներն ու վորոշումները դատախազության կողմից բողոքարկելուն, ապա այդպիսի դեպքեր նույնպես տեղի չեն ունեցել, յերը դատական սեկցիաները ընդունել են իրենց իրավասությունից դուրս գործեր:

6. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆԳՅՈՒՂԹՎԱԿԻՑՆԵՐԸ

Բանդյուղթղթակիցները բացառիկ դեր ունեն պաշտոնական հանցագործությունները յերևան հանելու, գործարաններում և ձեռնարկություններում տեղի ունեցող անտնտեսությունը հայտնաբերելու, քաղքուկն ու բյուրոկրատիզմը ամենուրեք մերկացնելու, ինչպես նաև կուսակցության ու իշխանության քաղաքականության խեղաթյուրումները վերացնելու գործում, ուստի դատախազությունը, բնականաբար, ուշադրության է առել բանդյուղթղթակիցների հաղորդած նյութերը, վորոնք կամ լույս են տեսել մամուլում կամ անմիջաբար ուղարկվել են դատախազության:

Ինչ վերաբերում է դատախազության և բանդյուղթղթակիցների և բանդյուղթղթակցական կազմակեր-

պուլթյունները փոխադարձ կապին, անդա՛յդ արտա-
հայտվել է մի կողմից նրանով, վոր առանձին բան-
դյուղթղթակիցները դիմել են մոտակա դատախազին
իրենց աշխատանքի բնագավառում ծագած այս կամ այն
հարցերը լուծելու համար, իսկ մյուս կողմից՝ դատա-
խազները անմիջական կապ են ստեղծել բանդյուղթղ-
թակիցների բյուրոների հետ, լուծելով այն բոլոր հար-
ցերը, վորոնք վերաբերում են բանդյուղթղթակիցների
առաջ ծառացած խնդիրներին:

Անկախ վերահիշյալից, դատախազությունը մաս-
նակցություն է ունեցել բանդյուղթղթակիցների բոլոր
համադրամարներին, խորհրդակցություններին, ղեկու-
ցում անելով զանազան նյութերի շուրջը:

1927 թ. ընթացքում դատախազությունը ընդամենը
ոգտագործել է 218 բանդյուղթղթակցություն, իսկ
1928 թ. առաջին կիսամյակում—206:

Այդ թղթակցությունների հիման վրա 1927 թ.
1-ին կիսամյակի ընթացքում ընդամենը դատի յեն յեն-
թարկվել 95 հոգի, կարգապահական պատասխանատ-
վություն—34, առաջարկվել է նկատված թերություն-
ները վերացնել 8 դեպքում, ուղարկվել է վարչության
հայեցողության 85 թղթակցություն, յերկու թղթակ-
ցությունների հետևանքով հարուցվել է յերկու քաղա-
քացիական հայց, իսկ 142 թղթակցությունների առթիվ
սկսված գործերը կարծվել են:

7. ԲՆՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏ

Բացի հետաքննության մարմինների աշխատանքի
վրա հսկելու պարտականություններից, վորոնք դրված
են յեզել դատախազության վրա (այժմ այդ հսկողու-
թյունը հանձնված է քննչական ապարատին), դատա-

խազությունը միաժամանակ ղեկավարել է նաև քննչա-
կան ապարատի աշխատանքը: Հետաքննության վերա-
բերմամբ պետք է ասել, վոր շատ չնչին է այն դեպքերի
թիվը, յիրք դատախազությունը հանցավորներին դատի
յե յենթարկել, և ընդհակառակը, շատ մեծ տոկոս են
կազմում այն գործերը, վորոնք կարծված են դատա-
խազության կողմից: Այս հանդամանքը ապացույց է
հետաքննական ապարատի թուլության, վորի աշխա-
տակիցները ղեկ ևս պատշաճ պատրաստություն չունեն
և բացի դրանից շարունակ միեւնոյն տեղում չեն աշ-
խատում, այլ շատ հաճախ մի վայրից մյուսն են տե-
ղափոխվում: Քննչական աշխատանքը վորակապես լա-
վացել է, և այդ ապարատի նախկին թերությունները
դժալի չափով վերացված են: Մի կողմից՝ կենտրոնա-
կան դատախազության կենդանի և դրավոր հրահանգ-
ման, մյուս կողմից՝ ընդհանուր մակարդակից հետ
ընկնող առանձին քննիչների իրենց վրա կատարած աշ-
խատանքի շնորհիվ քննչական ապարատը զգալի չափե-
րով բարելավված է. այս հաջողությունը վորոշ չափով
նպաստել է նաև այն հանդամանքը, վոր սկսած 1927 թ.
քննչական ապարատը անմիջաբար յենթարկվում է
կենտրոնական Դատախազության հսկողությանը:

Անցնելով ղեկավարության մեթոդների կոնկրետ
լուծանդակությունը, անհրաժեշտ է նշել, վոր առանձին
քննիչներին հրահանգելու նպատակով դատախազները
մեկնում են զալառական կենտրոնները. աշխատանքի
այս յեղանակը այժմ արդեն ստանում է պատշաճ ծա-
վայում և անշեղորեն կիրարկվում է տեղերում: Ինչ
վերաբերում է կենտրոնական դատախազության, ապա
քննչական ապարատի հրահանգումը նա կատարում է
թե քննիչներին համապատասխան ցուցումներ տալով և

Թե այս կամ այն առանձին հարցերի առթիվ չըջաբերականներ, գրավոր ցուցումներ հրատարակելով և այլն: Տվյալներից յերևում է, վոր տարեցտարի պակասում է այն գործերի թիվը, վոր դատախազությունը վերադարձնում է լրացուցիչ կերպով, քննելու համար, և բարձրանում է քննչական ապարատի աշխատանքի վորակը: Միաժամանակ պետք է նշել քննչական ապարատի մի շարք թերությունները.— նախ՝ քննչական ապարատը բավարար ուշադրությամբ չի վերլուծում քննական նյութը, վորի հետևանքով հաճախ ընթացք է տրվում այնպիսի գործերի, վորոնց նախաքննությունը բողոքովին անհրաժեշտ չի յեղել կամ կարելի չի յեղել ընդհանրապես այդ առթիվ քննություն կատարելու կասկածելի անձանց գործողություններում քրեապես պատժելի արարքի նշաններ չլինելու պատճառով: Բացի դրանից չի ուղղված դասակարգային գիծը խափանման միջոցներ ընտրելու հարցում գլխավորապես տնտեսական և պաշտոնական հանցանքների վերաբերմամբ և այլն:

Դատախազությունը միջոցներ է ձեռք առել նաև քննչական աշխատանքի դանդաղության դեմ պայքարելու համար. այսպես՝ սահմանված են հաստատուն ժամանակամիջոցներ թե կալանավորական և թե վոչ—կալանավորական գործերի վերաբերյալ քննություն կատարելու համար: Այս ժամանակամիջոցների անչեղ կիրարկության վրա հսկում է տեղական դատախազությունը: Քննություն կատարելու արագությունը 1927 թ. և 1928 թ. առաջին կիսամյակում հավասար է յեղել 11½ ամսի, առանձին քննչական շրջաններում հասնելով 17, 20, 26 և 30 օրի:

Այս է, ընդհանուր առմամբ այն աշխատանքը, վոր

դատախազությունը կատարել է քննչական ապարատի ղեկավարման և նրա աշխատանքների հսկողության առարկաներում:

8. ԴԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Պետք է նշել, վոր հաշվետու շրջանում դատախազությունը թույլ չափերով է մասնակցել դատարանների տնորինական և դատական նիստերին: Այս հանգամանքը բացատրվում է մասամբ նրանով, վոր դատախազները չափազանց ծանրաբեռնված են հասարակական—քաղաքական և գյուղական աշխատանքներով, և մասամբ նրանով, վոր դավառական դատախազության շտաբը գեղեւս չափազանց փոքր է, և մի դատախազ չի կարողանում կատարել իր վրա դրված անմիջական պարտականությունները:

Գավառական դատախազների վիճակագրական տրվյալների համաձայն կես տարվա ընթացքում (1928 թ.) նրանք բողոքարկել են ընդամենը 54 դատավճիռ և վրձիռ: Այսպիսով դատախազության անմիջական, ուղղակի աշխատանքը քանակապես բարձրացնելու համար անհրաժեշտ է ավելացնել դատախազական միավորները զավառում:

Ինչ վերաբերում է դատախազության գործունեությանը Գերագույն Դատարանի վճռարեկ կոլլեգիաներում, ապա այդ գործունեությունը յերկու հիմնական կողմ ունի—ա) յեղրակացություն վճռարեկ կոլլեգիաներում լավող գործերի մասին և բ) վերահսկողական աշխատանք:

Իրենց աշխատանքի առաջին մասը դատախազները լիովին կատարել են: Դատախազները փաստորեն մասնակցել են վճռարեկ կոլլեգիայի նիստերին, հատկապես քաղաքացիական գործերի վերաբերմամբ: 1927 թ.

ընթացքում դատախազությունը յեզրակացութեւն և տվել 2100 քաղաքացիական և 1887 քրեական և 403 աշխատանքային գործերի մասին, 1928 թ. առաջին կիսամյակում—1447 քաղաք., 1140 քրեական, 349 աշխատանքային և 464 հոգային գործերի մասին: Դատախազության տված յեզրակացութեան ելութիւնն այն չէ յեղել, վոր նրանք միայն մատնանել են վճարեկ դանդաղների մեջ բերված հանգամանքների հիմնավոր լինելը, այլ ալ, վոր նրանք պարզել են, թե վորքան ճիշտ են յեղել ընդունված դատավճիռներն ու վճիռները:

Բացի այդ աշխատանքից դատախազութեան գործունեութեանն և վերաբերում նաև որինական ուժի մեջ մտած վճիռների քննութիւնը հսկողութեան կարգով: 1927 թ. հսկողութեան կարգով պահանջված և յեղել 465 գործ (քրեակ., քաղաքաց., աշխատ. և հոգային): Այդ թվից Պլենում և մտցված միայն 213 գործ՝ հսկողութեան կարգով վճիռը բեկանելու համար և պլենում մտցված գործերից բեկանված և ընդամենը 123 գործի վճիռ: 1928 թ. առաջին կիսամյակում դատախազութեան պահանջած 297 գործերից Պլենում և մտցված միայն 94 գործ, այսինքն՝ 31,6%, այս ցույց և տալիս, վոր պլենում մտցված գործերի թվի համեմատութեամբ մեծ և այն գործերի թիվը, վորոնց վճիռը բեկանված և պլենումի կողմից, սակայն յեթե նկատի ունենանք դատախազութեան պահանջած բոլոր գործերի քանակութիւնը (297), ապա այդ տոկոսը մեծ չէ:

Պետք և հիշատակել դատախազութեան փշխատանքի նաև մի այլ բնագավառ,—այդ դատավճիռների ու վճիռների կատարման և կալանատնների հսկողութիւնն և: Վճիռների ու դատավճիռների կատարման վրա հըս-

կելու համար դատախազութիւնը ժողովրդական դատարաններից ստանում և այն գործերի ցուցակը, վորոնց վճիռները հանձնված են ի կատար ածելու. այս գեպըում դատարանները մատնանում են հանձնելու ժամանակը և հայտնում են, թե վոր մարմինն և հանձնված: Դրանից անկախ, հսկողութեան նույն նպատակին են ծառայում կալանավորների անձնական գործերը, վոր նայում են դատախազները կալանավայրերն ալցելելիս: Պետք և նկատել, վոր դատախազութեան այս աշխատանքը տեղերում դեռ պատշաճ բարձրութեան վրա չի դրված:

Ինչ վերաբերում և կալանավայրերի հսկողութեան, ապա այդ աշխատանքի հիմնական ձևը այն կենդանի կապն և, վոր պահպանում և դատախազը կալանավայրերի հետ, կանոնավորապես ալցելելով կալանավայրերն ու ուղղիչ տները: Աշխատանքի այս ձևը պետք և համարել արդեն հիմնավորապես կարգավորված: 1927 թ. ընթացքում յեղել և 408 ալցելութիւն, 1928 թ. առաջին կիսամյակում—210: Դատախազութիւնը այդ ալցելութիւնների ժամանակ կալանավորներից դրավոր և բանավոր դանդաղներ և ընդունել, վորոնք բացահարավորութեան քննվել և լուծվել են հենց տեղում:

Այս և դատախազութեան գործունեութեան ընդհանուր բնորոշումը:

V. ՈՐԵՆՍԴՐԱԿԱՆ-ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արդժողկոմատի աշխատանքի ծանրութեան կենտրոնը Որենսդրական-իրավաբանական բաժնի գծով յեղել և որենսդրական մարմիններից ստացված որոնագրերի նախապատրաստումն ու ձևակերպումը, ինչպես

մանկել են ուսերեն և թուրքերեն լեզուներով
և ուղարկվել են համապատասխան ուսումնական
պետ՝ թարգմանված և ուսերեն և թուրքերեն ՀՍԽՀ
Սահմանադրությունը (նոր խմբագրությամբ), թուր-
քերեն—Ամուսնության, ընտանիքի և խնամակալու-
թյան օրենսդիրքը, խորհուրդների ընտրության հրա-
հանգը, դուրսխորհուրդների գաղական սեկցիաների
վերաբերյալ օրենքը և այլն:

Ինչ վերաբերում է կողիֆիկացիայի (հնացած ու-
րենքները վերացնելու և գործող բոլոր օրենքները հա-
մախմբելու) ասպարեկում կատարված աշխատանքին,
ապա գեո. 1927 թ. Արդժողկոմատը կողիֆիկացիայի յե
յենթարկել ՀՍԽՀ օրենսդրությունը, սկսած Հայաստա-
տանի խորհրդայնացումից—1920 թ. նոյեմբերի 29-ից
մինչև 1925 թ. ներառյալ, կազմելով փաստորեն իրենց
ուժը կորցրած օրենքների ցանկը: Այս աշխատանքը
Արդժողկոմատը վերջնականապես ձեռնարկել է հաշ-
վետու էկոնոմյակի սկզբում և միայն միջոցների բացա-
կայության պատճառով չի հրատարակել կողիֆիկացի-
ոն ժողովածուն. միայն անհրաժեշտ դեմար հատկաց-
վելուց հետո Արդժողկոմատը հնարավորություն կու-
նենա օրենսդրության կողիֆիկացիայի վերաբերյալ
աշխատանքը իրացնելու:



<< Ազգային գրադարան



NL0215772

40. 321